

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 23.6/[43303]-10

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՄԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՄԻ 2-ԻՆ  
ԺԱՍԸ 15:15-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ ԸԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ  
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

Խորհրդի անդամներ

Մասնակցում էին՝

Ա. Գևորգյան	ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար
Մ. Վարդանյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարար
Գ. Դանիելյան	ՀՀ արդարադատության նախարար
Հ. Բեգլարյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի առաջին տեղակալ
Ս. Թումասյան	ՀՀ Էկոնոմիկայի նախարարի տեղակալ (խորհրդի քարտուղար)
Վ. Արամյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Ֆ. Բաշոյան	ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի տեղակալ

Հրավիրվածներ

Դ. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Վ. Խուրշուդյան	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր
Ա. Նոանյան	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր
Ա. Աղաջանյան	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր
Ա. Մարտիրոսյան	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր
Լ. Հունանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետի տեղակալ
Ա. Հարությունյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության փորձագետ
Ֆ. Փիրումյան	«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ -ի գործադիր տնօրեն

Է. Ավետյան

ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» պետական հիմնարկի տնօրեն

1. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի առաջին տրանշի շինարարական աշխատանքների տեխնիկական վերահսկողության և երկրորդ տրանշի մանրամասն ինժեներական նախագծի պատրաստման աշխատանքներն իրականացնող խորհրդատվական ընկերության ընտրության «կարճ ցուցակի» հաստատում

(Հ. Բեգլարյան, Տ. Սարգսյան)

1. Օրակարգի 1-ին հարցը ներկայացրեց ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի առաջին տեղակալ Հ. Բեգլարյանը և նշեց, որ ծրագրի առաջին տրանշի շինարարական աշխատանքների տեխնիկական վերահսկողությունը եւ երկրորդ տրանշի մանրամասն ինժեներական նախագծի պատրաստման աշխատանքներն իրականացնելու համար հայտարարվել է խորհրդատու կազմակերպության ընտրության մրցույթ, որի առաջին փուլը 6 կազմակերպությունից կազմված կարճ ցուցակի ընտրությունն է: Տեղեկացրեց նաեւ, որ համաձայն ԱԶԲ-ի առաքելության ընթացքում ձեռք բերված պայմանավորվածության, ԱԶԲ-ն իրականացրել է ներկայացրած հայտերի մանրամասն գննում, կարճ ցուցակի կազմում, որը ներկայացվել է Գնահատող հանձնաժողովին: Գնահատող հանձնաժողովը հավանություն է տվել ԱԶԲ-ի ներկայացրած կարճ ցուցակին եւ այն ներկայացնում է Կառավարման խորհրդի հաստատմանը:

Հետաքրքրության հայտ ներկայացրել էին 18 կազմակերպություն՝ իրենց որակավորման տվյալներով:

Առաջին նիստի շրջանակներում հանձնաժողովը գննեց ներկայացված հայտերը: Հաշվի առնելով, որ ԱԶԲ-ն պետք է իրականացնէր տվյալ հայտերի մանրամասն գննումն ու կարճ ցուցակի կազմումը, հանձնաժողովը որոշեց շարունակել ուսումնասիրել հայտերը՝ ԱԶԲ-ի կարճ ցուցակը քննարկելու եւ Կառավարման խորհրդին ներկայացնելու նպատակով եւ

հանձնարարել «Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ԾԻԿ» ՊՈԱԿ-ին յուրաքանչյուր հայտի վերաբերյալ տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն՝ հաշվի առնելով տեխնիկական առաջադրանքում նշված գնահատման չափորոշիչները:

Հաջորդ նիստի ընթացքում ներկայացվեցին ԾԻԿ-ի կատարած մրցույթի մասնակիցների կողմից ներկայացրած տվյալների վերլուծությունը և ԱԶԲ-ի կողմից ներկայացրած կարճ ցուցակը:

Ըստ ԾԻԿ-ի վերլուծության՝ կարճ ցուցակում ընդգրկված 7 կազմակերպություններից 6-ը համընկնում էին Բանկի կարճ ցուցակի հետ:

ԾԻԿ-ը նախապատվություն էր տվել SGI Studio Galli Ingegneria S.p.A (Scott Wilson)-ին՝ հաշվի առնելով հայկական գործընկերոջ առկայությունը, իսկ ԱԶԲ-ն՝ MINCONSULT SDN BHD-ին, որը նույնպես ուներ բարձր ցուցանիշներ:

Կարճ ցուցակում ընդգրկվել են հետևյալ 6 կազմակերպությունները՝

1) Kocks Consult GmbH (Գերմանիա) և Destia-Finnroad LTD-ի (Ֆինլանդիա) հետ համատեղ.

2) Roughton International Ltd. (Միացյալ Թագավորություն) և «Արոսա» ՍՊԸ (Հայաստան) և «Ճաննախագիծ» ՍՊԸ-ի (Հայաստան) հետ համատեղ.

3) SHELADIA Associates Inc. (ԱՄՆ) և «Վի Ջի Էմ Փարտնրզ» ՍՊԸ-ի (Հայաստան) հետ համատեղ.

4) Egis Bceom International (Ֆրանսիա).

5) MINCONSULT SDN BHD (Մալայիա).

6) DOHWA Consulting Engineers Co., Ltd (Հարավային Կորեա) և «Արտրանս» ՍՊԸ-ի

(Հայաստան) հետ համատեղ:

Նշեց նաև, որ ցուցակի հաստատման դեպքում ԱԶԲ-ն կիրավիրի տվյալ խորհրդատվական կազմակերպություններին՝ տեխնիկական և ֆինանսական առաջարկներ ներկայացնելու:

2. ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Մ. Վարդանյանն առաջարկեց արտերկրի նախագծող մասնագետների հետ աշխատել մինչև տեղի մասնագետները փորձ ձեռք կբերեն, տեղեկացրեց նաև, որ ճարտարապետաշինարարական մասնագիտացում ունեցող ուսանողները պրակտիկա կանցնեն այդ աշխատանքներն իրականացնող ընկերություններում:

3. ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար Ա. Գևորգյանը նշեց, որ MINCONSULT SDN BHD (Մալաիա) ընկերությունը, որն ԱԶԲ-ի կողմից առաջադրվածն է, չունի ճանապարհի ծածկի նախագծման, ինչպես նաև ճանապարհի ապահովության մասնագետ:

4. ՀՀ էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանը տեղեկացրեց, որ ԱԶԲ-ի հետ պայմանավորվածությունն ունեն, և քանի որ առաջին տրանշի նախագիծը իրականացնում է տեղական կազմակերպություն, առաջարկեց, որ առաջին տրանշի շինարարության վերահսկողը մանրամասն ուսումնասիրի նաև առաջին տրանշի նախագիծը:

5. Քննարկումներից հետո որոշվեց հաստատել ԱԶԲ-ի կողմից ներկայացված խորհրդատվական ընկերության ընտրության «կարճ ցուցակը», որում ընդգրկված են 6 ընկերություն:

2. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի 2-րդ փուլի՝ Աշտարակ - Թալին ճանապարհի օտարվող հողի և գույքի ճշգրտման և գնահատման տեխնիկական առաջադրանքի հաստատում

-----  
(Ֆ. Փիրումյան, Տ. Սարգսյան)

1. Օրակարգի 2-րդ հարցը ներկայացրեց «Հյուսիս- Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Ֆ.

Փիրումյանը, և նշեց որ Աշտարակ - Թալին ճանապարհի հատվածի օտարվող հողի և գույքի ճշգրտման և գնահատման տեխնիկական առաջադրանքի նպատակը՝ Ծրագրի 2-րդ փուլի նախապատրաստման նպատակով Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի մշակմանն օժանդակելն է: Ֆ. Փիրումյանը կարևորեց այս տեխնիկական առաջադրանքով նախատեսված աշխատանքների իրականացման ապահովումը ներկայացված ժամանակացույցին համաձայն, ինչը հնարավորություն կտա պահպանելու ԱԶԲ-ի հետ համաձայնեցված ժամկետները, և Հողի օտարման և տարաբնակեցման պլանի մշակման աշխատանքները ավարտել 2010 թվականի դեկտեմբերի 1-ին, ինչը հանդիսանում է 2-րդ տրանշի հաստատման նախապայման: Տեղեկացրեց նաև, որ տեխնիկական առաջադրանքով նախատեսված աշխատանքների իրականացման ժամկետը կազմում է 5 շաբաթ, և նշեց, որ ուսումնասիրման ենթակա տարածքը բավականին մեծ է՝ 405 հոդակտոր, 31 իրավաբանական անձի գույք, 17 շինություն և հուշարձան: Տեխնիկական առաջադրանքի իրականացման արդյունքում ստացված տվյալների հիման վրա կազմված Հողի օտարման և տարաբնակեցման ծրագիրը կներկայացվի ՀՀ կառավարության հաստատմանը, որպեսզի 2011թ. բյուջեում նախատեսվեն հողերի ձեռքբերման ֆինանսական ռեսուրսներ: Ավելացրեց, որ երկշաբաթյա ժամկետում կպատրաստվի ՀՀ կառավարության որոշման նախագծեր, որտեղ ընդգրկված կլինեն նկարագրության արձանագրությունների կազմման համար ՀՀ կառավարության կողմից ընդունված չափանիշերը և համապատասխան իրավասու մարմինների հետ համագործակցության և դրանց կողմից անհրաժեշտ տեղեկատվության տրամադրման վերաբերյալ դրույթները: ՀՀ կառավարության որոշման նշված նախագծերը երկշաբաթյա ժամկետում պատրաստ լինելուց հետո կշրջանառվեն ու կհամաձայնեցվեն շահագրգիռ մարմինների հետ և այնուհետև կներկայացվեն ՀՀ կառավարության հաստատմանը:

2. ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը մտահոգություն հայտնեց, որ ԱԶԲ-ի կողմից ներկայացված մեթոդիկան, իրացումների հետ կապված, թանկ կարժենա մեր պետության համար և առաջարկեց այդ մեթոդիկաները ևս մեկ անգամ քննարկել:

3. ՀՀ արդարադատության նախարար Գ. Դանիելյանը նշեց, որ տեխնիկական առաջադրանքով նախատեղված աշխատանքները պետք է իրականացվեն համաձայն ՀՀ օրենսդրության և առաջարկեց համապատասխան լրացումներ կատարել տեխնիկական առաջադրանքի տեքստում: Անդրադառնալով սոցիոլոգիական հետազոտություններին՝ նշեց նաև, որ որպես հիմք պետք է ընդունվեն ոչ թե սոցիալական հարցումների ընթացքում ստացված տեղեկությունները, այլ համապատասխան պետական մարիինների կողմից պաշտոնապես տրամադրված տվյալները և ավելացրեց, որ քանի որ այս ամենով զբաղվում են համապատասխան նախարարությունները, զուգահեռ որևէ կազմակերպության կողմից նմանատիպ գործառույթի իրականացումն աննպատակահարմար է՝ հաշվի առնելով, որ այն կբերի լրացուցիչ ծախսերի: Առաջարկեց նաև, որ տեխնիկական առաջադրանքում ճշգրտվեն գործունեության դադարեցման կետերի վերաբերյալ դրույթները, որպեսզի հետագայում դատական վեճերի առիթ չդառնան:

4. ՀՀ էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանը տեղեկացրեց, որ «Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Ֆ. Փիրումյանը ոչ թե գերակա շահ ճանաչելու մասին ՀՀ կառավարության որոշումն է փոփոխում, այլ ներկայացնում է որոշակի չափանիշներ, որոնք կհաստատվեն ՀՀ կառավարության առանձին որոշմամբ, և որոնց միջոցով կֆորմալացվեն ազդեցության ենթակա անձանց օտարվող հողի և գույքի նկարագրությունների արձանագրությունների կազմման ձևերը:

#### 5.Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հաստատել Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի 2-րդ փուլի՝ Աշտարակ - Թալին ճանապարհի հատվածի օտարվող հողի և գույքի ճշգրտման և գնահատման

տեխնիկական առաջադրանքը՝ ներառելով ՀՀ արդարադատության նախարար Գ. Դանիելյանի կողմից կատարված առաջարկությունները:

2) հանձնարարել «Հյուսիս- Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Ֆ. Փիրումյանին՝ ՀՀ արդարադատության նախարար Գ. Դանիելյանի հետ համատեղ քննարկել և հստակեցնել Հողի օտարման և տարաբնակեցման շրջանակի հաստատման մասին ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի որոշ ձևակերպումներ (քանի որ իրավական փաստաթուղթը կառավարության որոշումն է), և ներկայացնել ՀՀ կառավարության հաստատմանը:

3. Ասիական զարգացման բանկի 2010թ.-ի մայիսի 28-ից հունիսի 4-ը Երևանում իրականացված առաքելության կողմից պատրաստված Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի (տրանշ 1 և տրանշ 2) հուշագրի մասին

-----  
(Ֆ. Փիրումյան, Տ. Սարգսյան)

1. Օրակարգի 3-րդ հարցը ներկայացրեց «Հյուսիս- Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Ֆ. Փիրումյանը, և նշեց, որ ըստ Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի կառավարման խորհրդի կանոնադրության 7-րդ կետի 10-րդ ենթակետի, կառավարման խորհուրդը քննարկում է նմանատիպ փաստաթղթերը: 2010 թվականի մայիսի 28-ից հունիսի 4-ը Երևան է այցելել ԱԶԲ-ի ծրագրի ղեկավարը և ուսումնասիրել է ծրագրի հետ կապված բոլոր հարցերը՝ «Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպության հիմնադրման հետ կապված, բնապահպանական և հողերի օտարման հարցերը, ինչպես նաև մշակվել է ժամանակացույց հետագա աշխատանքներն իրականացնելու վերաբերյալ: Տեղեկացրեց նաև, որ ԱԶԲ հուշագրի 24-րդ կետից հետո կա գործողությունների պլան, որի 3-րդ կետով նշված Կառավարության հետ համաձայնեցվելիք պայմանագրերի 1 մլն ԱՄՆ-ի դոլարի շեմը ԱԶԲ-ն

առաջարկում է բարձրացնել մինչև 5 մլն ԱՄՆ դոլար: ԱԶԲ մտավախությունը նրանում է, որ հնարավոր է նշված ժամկետներում չի ստորագրվի առաջին տրանշի շինարարական աշխատանքների տեխնիկական վերահսկողության և երկրորդ տրանշի մանրամասն ինժեներական նախագծի պատրաստման աշխատանքներն իրականացնող խորհրդատուի հետ պայմանագիրը, ինչը կհանգեցնի երկրորդ տրանշի համաձայնագրի ստորագրման ձախողմանը: Եվ նշեց, որ ԱԶԲ-ի ներկայացուցչին տեղեկացրել է այն մասին, որ շեմի փոփոխությունը իրագործելի չէ, սակայն նույն ժամանակ կձեռնարկի բոլոր հնարավոր միջոցները, Կառավարությունում այդ հարցերի օպերատիվ քննարկման համար: Առաջարկեց ընդունել ի գիտություն ԱԶԲ-ի առաքելության հուշագիրը:

2. Քննարկումներից հետո որոշվեց ընդունել ի գիտություն ԱԶԲ-ի առաքելության հուշագիրը:

4. «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի տարեկան ծախսերի նախահաշվի մասին

-----  
(Ֆ. Փիրումյան, Տ. Սարգսյան)

1. Օրակարգի 4-րդ հարցը ներկայացրեց «Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Ֆ. Փիրումյանը, և նշեց որ պատրաստ չեն ներկայացնելու «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի բյուջեն նշելով հետևյալ պատճառները՝ հաշվի առնելով, որ ՀՀ բյուջեով նախատեսված չեն հիմնական և տրանսպորտային միջոցների ձեռքբերման, ինչպես նաև հնարավոր չէ ներառել գրասենյակային տարածքի հետ կապված ծախսերը, որոնք հանդիսանում են բյուջեի ծախսային հոդվածների զգալի մասը, ԾԻԿ-ի տարեկան նախահաշիվը ներկայացված չէ ՀՀ ֆինանսների նախարարություն համաձայնեցման նպատակով: Առաջարկեց բյուջեում կատարել վերաբշխում երրորդ եռամսյակի «Շենքերի և շինությունների



շինարարություն» հողվածով նախատեսված 1,766,796.6 հազար դրամից պակասեցնելու միջոցով նախատեսել «Վարչական սարքավորում» հողվածը՝ ընդհամենը 36,0 մլն. դրամ, որից 30,0 մլն. դրամը ԱԶԲ-ի միջոցների, իսկ 6.0 մլն դրամը՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Նշեց նաև այն մասին, որ 2010 թ-ի առաջին կիսամյակում աշխատակազմը ձևավորված է եղել և աշխատել է, ինչի հաշվին առաջացել են աշխատավարձի և պարտադիր սոցիալական ապահովագրության գումարների վճարման պարտավորություններ և անհրաժեշտություն կա այդ վճարումները կատարել դեռևս չունենալով հաստատված տարեկան պահպանման ծախսերի նախահաշիվ:

2. Տրանսպորտի և կապի նախարար Մ. Վարդանյանը տեղեկացրեց, որ ԱԶԲ-ն վարկային միջոցներից չի կարող ֆինանսավորել գրասենյակային տարածքի նորոգման աշխատանքները և տրանսպորտային միջոցների ձեռքբերումը և դիմեց Կառավարման Խորհրդին համապատասխան ֆինանսավորման համար:

### 3. Քննարկումից հետո որոշվեց հանձնարարել՝

1) «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Ֆ. Փիրումյանին՝ ՀՀ Ֆինանսների նախարարություն ներկայացնել առաջին վեց ամսվա ընթացքում կատարված փաստացի ծախսերի գումարները /աշխատավարձը և պարտադիր սոցիալական վճարը/,

2) ՀՀ ֆինանսների նախարար Տ. Դավթյանին՝ «Հյուսիս- Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Ֆ. Փիրումյանի կողմից ներկայացվելիք 2010 թվականի առաջին 6-ամսվա ընթացքում կատարված փաստացի ենթակա վճարման գումարները (աշխատավարձ և պարտադիր սոցիալական վճարը) ստանալուց հետո սահմանված կարգով ապահովել համաֆինանսավորումը:

3) ՀՀ Տրանսպորտի և կապի նախարար Մ. Վարդանյանին և ՀՀ Ֆինանսների նախարար Տ. Դավթյանին՝ կատարել «Ասիական Զարգացման Բանկի աջակցությամբ իրականացվող


Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման ծրագրի» մասով բյուջեի փոփոխությունները՝ նախատեսելով վարչական սարքավորումներ հոդվածով ԾԻԿ-ին անհրաժեշտ 36.0 մլն դրամ ծախսերը երրորդ եռամսյակի «Շենքերի և շինությունների շինարարություն» հոդվածի հաշվին:

4) «Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Ֆ. Փիրումյանին՝ պահպանման ծախսերի մեջ ներառել տարածքի, 2 տրանսպորտային միջոցների շահագործման և վարչական սարքավորումների ձեռքբերման հետ կապված ծախսերը և ՀՀ ֆինանսների նախարարության հետ քննարկելուց հետո ներկայացնել Կառավարման Խորհրդի հաստատմանը:

5) ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Մ. Վարդանյանին՝ ՀՀ կառավարություն ներկայացնել «Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գրասենյակային տարածքի նորոգման աշխատանքների իրականացման համար նախատեսվող 50 մլն դրամի ֆինանսավորման ապահովման առաջարկություն:


6) ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Մ. Վարդանյանին «Հյուսիս- Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի համար ավտոմեքենաներ ձեռք բերելու հարցը քննության առնել ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի մոտ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏ  
(ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ)



ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ



ՍՈՒՇԵՂ ԹՈՒՄԱՍՅԱՆ